Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ս. Առաքելյան
«17» «12» 2014 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ԻՋԵՎԱՆ - 2014

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), որ մասնագիտական վարպետության բարձրացման կարևորագույն օղակ է ինչպես սկսնակ, այնպես էլ ստաժավոր դասախոսների համար, ստեղծվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (այսուհետ՝ Մասնաճյուղ) ուսումնական բաժնի հիմքի վրա և գործում է նրա հետ փոխկապակցված:

1.2. Կենտրոնն աջակցություն է ցուցաբերում սկսնակ դասախոսներին՝ տիրապետելու մասնագիտական գիտելիքների, ունակությունների և հմտությունների՝ բարձրագույն դպրոցի մանկավարժության, դիդակտիկայի, հոգեբանության բնագավառում նոր մեթոդիկաների և ուսուցման տեխնոլոգիաների յուրացման գործում, նպաստում է մանկավարժի անձի ստեղծագործական ներուժի զարգացմանը:

1.3. Կենտրոնը թույլ է տալիս բարձրացնել աշխատանքի ստաժ ունեցող դասախոսների որակավորումը, կատարելագործել դասավանդման մեթոդիկան, ուսումնական գործընթացում ներառել կրթական նորագույն տեխնոլոգիաներ, գիտելիքներ ստանալ ժամանակակից բուհի և նրա կառուցվածքային բաղադրիչների կառավարման ոլորտում:

1.4. Կենտրոնը նպաստում է սկսնակ և ստաժավոր դասախոսների ստեղծագործական և մտավոր ներուժի զարգացմանը, ծառայում է որակական բարձր մակարդակով Մասնաճյուղում ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման նպատակին:

2. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Մասնաճյուղի դասախոսական կազմի կողմից կրթության բնագավառում ՀՀ օրենսդրության, պետական կրթական չափորոշիչների, ՀՀ կրթության և գիտության նախարարության նորմատիվ փաստաթղթերի, բուհերում կրթական գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթերի ուսումնասիրության կազմակերպում:

2.2. Մանկավարժական գործունեությանը դասախոսների պատրաստվածության

մակարդակի բացահայտում (անկետավորում, թեստավորում և այլն): Մանկավարժական կազմի մասնագիտական գործունեության մեջ դժվարությունների բացահայտում և վերլուծություն, դրանց վերացման ուղղությամբ երաշխավորագրերի մշակում:

2.3. Դասախոսների ուսուցում՝ բուհում դասավանդման մեթոդիկայի ժամանակակից տեխնոլոգիաներին, ուսուցման և դաստիարակության առավել արդյունավետ մեթոդիկաների ծանոթացմամբ:

2.4. Դասախոսների ուսումնամեթոդական հմտությունների զարգացում և կատարելագործում, մանկավարժության և հոգեբանության բնագավառում գիտահետազոտական գործունեության հնարավորությունների մակարդակի բարձրացում (գիտական գրականության հետ աշխատանքի, տարաբնույթ հետազոտական, հոգեբանական-մանկավարժական մեթոդիկաներից օգտվելու առանձնահատկությունների, գիտական հոդվածներ, զեկուցումներ պատրաստելու և այլն):

2.5. Դասախոսներին աջակցության ցուցաբերում՝ ուսումնական պարապմունքների տարբեր տեսակների դասավանդման համար գործնական հմտություններ ձեռք բերելու, ուսուցման առավել արդյունավետ նորագույն միջոցների կիրառման գործում: Ցուցադրական և բաց պարապմունքներին հաճախելու աշխատանքի կազմակերպում, փորձնական պարապմունքների կազմակերպմանն ու անցկացմանն աջակցում:

2.6. Օգնության ցուցաբերում Մասնաճյուղի դասախոսական ողջ կազմին՝ տիրապետելու ուսուցման տեխնիկական ժամանակակից միջոցներով աշխատանքի հմտություններին, կատարելագործելու համակարգչային տեխնիկային և օժանդակ սարքավորումներին տիրապետելու կարողությունները:

2.7. Մասնաճյուղի ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման գործընթացին, կրթության ոլորտում ուսումնամեթոդական աշխատանքի կազմակերպման տեղական նորմատիվ փաստաթղթերին, ժամանակակից բարձրագույն դպրոցում կառավարման տեխնոլոգիաներին դասախոսների ծանոթացում:

2.8. Այլ կրթական հաստատությունների առաջատար մանկավարժական փորձի տարածում ու ներդնում դասավանդման և դաստիարակության պրակտիկայում:

3. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Կենտրոնի լսարանի հիմնական կազմը ձևավորվում է մասնաճյուղի դասախոսներից, որոնց մանկավարժական ստաժը չի գերազանցում երեք տարին: Ամբիոնների որոշմամբ՝ որակավորման բարձրացման նպատակով Կենտրոնի պարապմունքներին կարող են մասնակցել նաև դասախոսների այլ կատեգորիաներ: Մանկավարժական վարպետության բարձրացման նպատակով պարապմունքներին կարող է ընդգրկվել ողջ դասախոսական կազմը:

3.2. Կենտրոնում ուսուցման տևողությունը մեկ տարի է՝ առանց աշխատանքից կտրվելու, պարապմունքների անցկացման պարբերականությունը՝ ամիսը մեկ անգամից ոչ պակաս: Կենտրոնի աշխատանքի պլանավորումն իրականացվում է 72 ուսումնական ժամից ոչ պակաս՝ ուսուցման ողջ ժամանակաընթացքում:

3.3. Կենտրոնի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է մասնաճյուղի տնօրենը: Կենտրոնի ղեկավարի գործառույթների իրականացումը դրվում է գիտամանկավարժական և մեթոդական աշխատանքի փորձ ունեցող հեղինակավոր դասախոսներից մեկի վրա: Նրա թեկնածությունը քննարկվում է գիտխորհրդում, և հաստատվում է մասնաճյուղի տնօրենի կողմից:

3.4. Կենտրոնի աշխատանքի բովանդակությունն ու ձևերը, ժամաբաշխման պլանավորումը սահմանվում է Մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից:

3.5. Կենտրոնն աշխատում է աշխատանքային ուսումնական ծրագրին, թեմատիկ պլանին, պարապմունքների դասացուցակին համապատասխան, որոնք մշակվում են Կենտրոնի ղեկավարի կողմից, հա մաձայնեցվում ամբիոնների վարիչների հետ և հաստատվում մասնաճյուղի տնօրենի կողմից: Տարվա ընթացքում Կենտրոնի աշխատանքի բովանդակությունը կարող է ճշգրտվել պրակտիկայի պահանջներին համապատասխան:

3.6. Կենտրոնում պարապմունքներ անցկացնելու համար ընդգրկվում են առավել փորձված դասախոսներ, ամբիոնների վարիչներ, մասնաճյուղի ղեկավարներ, գիտական և կրթական այլ հաստատությունների գիտնականներ և դասախոսներ:

3.7. Գիտական և կրթական այլ հաստատությունների դասախոսների ներգրավումն իրականացվում է պայմանագրային հիմունքով:

3.8. Ունկնդիրների հետ անցկացված պարապմունքների վրա ծախսված

ժամանակն ընդգրկվում է դասախոսի ուսումնամեթոդական ծանրաբեռնվածության մեջ: Կենտրոնի ունկնդիրները հաշվի են առնում պարապմունքների ժամանակը իրենց անհատական պլաններում՝ «Որակավորման բարձրացում» բաժնում:

3.9. Կենտրոնի ղեկավարությունը պետք է ձգտի գործադրել ունկնդիրների հետ կատարվող աշխատանքի տարաբնույթ ձևեր ու մեթոդներ՝ նրանց որակավորմանը համապատասխան (դասախոսություններ, սեմինարներ, բանավեճեր, գիտագործնական գիտաժողովներ, կլոր սեղաններ, մասնաճյուղի դասախոսների ցուցադրական պարապմունքներ, գործնական խաղեր, խորհրդատվություններ, իրադրային խնդիրների լուծում, փորձնական պարապմունքներ և այլն՝ ժամանակակից համակարգչային ինտերակտիվ և լրատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ):

3.10. Ուսուցման առաջին տարվա ավարտին ունկնդիրները ստուգարք են հանձնում: Ողջ ուսուցման արդյունքների, բաց պարապմունքների կամ մեթոդական աշխատանքների գնահատման հիման վրա ունկնդիրներին տրվում է վկայական, որը փաստում է Կենտրոնում ուսուցման ավարտի մասին: Վերջնական ստուգման ձևերը սահմանվում են մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից: Ուսուցման արդյունքները պետք է հաշվի առնվեն դասախոսական կազմի մասնագիտական որակավորման ատեստացիայի գործընթացում:

4. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

4.1. Կենտրոնի աշխատանքի վերահսկման և գնահատման ձևերը սահմանվում են մասնաճյուղի գիտխորհրդի կողմից: Կենտրոնի աշխատանքի ստուգումն անցկացվում է Մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության կողմից: Ստուգումների արդյունքները քննարկվում են գիտական խորհրդի նիստերին:

4.2. Կենտրոնի ունկնդիրների՝ դասընթացների հաճախելու պատասխանատվությունը դրվում է ամբիոնների վարիչների վրա: